Արձանագրություն 10

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 20.09.2019 թ. ժամը 10:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովը նախագահող՝

Կարեն Խաչատրյան - Տնտեսական բաժնի պետ (ԳՊ/ԳԱ)

Հանձնաժողովի անդամներ՝

Արեգ Գևորգյան - Անվտանգության ապահովման բաժնի առաջատար մասնագետ (ԳՊ/ԳԱ)

Հայկ Գրիգորյան - Անվտանգության ապահովման բաժնի ցանցային գլխավոր ադմինիստրատոր (ԳՊ/ԲԱ)

Կարեն Բարիկյան - Անվտանգության ապահովման բաժնի ցանցային ադմինիստրատոր (ԳՊ/ԲԱ)

Գնումները համակարգող՝

Դավիթ Գասպարյան - Գնումների և մատակարարման բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում է հանձնաժողովի նախագահ՝ անվտանգության ապահովման բաժնի պետ Արտակ Եփրեմյանը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526–Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի առաջին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի նիստը նախագահում է տնտեսական բաժնի պետ Կարեն Խաչատրյանը:

<u>Օրակարգ</u>

1. **<u>Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու մասին</u>**

1.1Հաշվի առնելով, որ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով՝ «անվտանգության և պահնորդային» ծառայությունների ձեռքբերման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների ստուգման համար ՀՀ պետական եկամուտների կոմիտե կատարված հարցմանը երեք աշխատանքային օրվա ընթացքում ստացվել է դրական պատասխան՝ այն է մասնակցի ֆինանսական միջոցները համապատասխանում են հրավերի պահանջներին: Մասնակիցը սահմանված կարգով ներկայացրել է հրավերով պահանջված փաստաթղթերը՝ որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագրեր ներկայացվել են «Պահունի» ՍՊ ընկերության և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության միջև 26.06.2015թ. կնքված և «Պահունի» ՍՊ ընկերության և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության միջև 01.06.2015թ. կնքված պայմանագրերը, որոնք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջին՝ ըստ որի նմանատիպ պայմանագրերը պետք է իրականացված լինեն հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում: Ներկայացվել է նաև «Պահունի» ՍՊ ընկերության և «Արմենիան քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության միջև 01.12.2016թ. կնքված պայմանագիրը, որին կից պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման

բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակում հստակ նշված չեն, թե արդյո՞ք պայմանագիրը կատարվել է սահմանված ժամկետներում և պայմանագրի դրույթներին համապատասխան: Հիմք ընդունելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1.2 Մասնակցի ֆինանսական միջոցներ որակավորման չափանիշը գնահատել բավարար:

1.3 Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և ծանուցել «Պահունի» ՍՊ ընկերությանը երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

1.4 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավերել սույն թվականի սեպտեմբերի 27-ին ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովը նախագահող՝ Կարեն Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝

Արեգ Գևորգյան

Հայկ Գրիգորյան

Կարեն Բարիկյան

Գնումները համակարգող՝ Դավիթ Գասպարյան